

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ

2018/2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	6
I. Որակյալ կրթություն.....	6
II. Արդիական հետազոտություն և նորարարություն	17
III. Հանրային ներգրավում և ծառայություններ	25
IV. Որակյալ մարդկային ռեսուրսներ	35
V. Որակյալ ենթակառուցվածքներ	39
VI. Որակյալ ծառայություններ.....	46
VII. Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն.....	58
VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում.....	68
IX. Միջազգայնացում և գործակցություն.....	79

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանը 2018/2019 ուստարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (ՌԾ) սահմանված նպատակներին ու խնդիրներին համապատասխան: ՌԾ-ով սահմանված ինը ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումը միտված է համալսարանում որակյալ կրթության ապահովմանը, արդիական հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, նոր ենթակառուցվածքների ստեղծմանն ու հների բարելավմանը, բարձրորակ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: Նշված խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները և պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և ակնկալվող արդյունքները սահմանված են ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով:

Սույն զեկույցում ներկայացվում է 2018/2019 ուստարում այդ խնդիրների և համապատասխան գործողությունների կատարողականը:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:

«Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի *Խնդիր 1.1*-ով սահմանված է. *«Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ»:*

Խնդրի իրականացմանն ուղղված մի շարք գործողություններ կատարվել են նախորդ ժամանակահատվածներում:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր»:* 2018/2019 ուսումնական տարում մշակվել և հաստատվել են մագիստրոսական մի շարք նոր կրթական ծրագրեր, որոնցից մեկը՝ «Վարչագործարարական թարգմանություն»-ը, միջմասնագիտական ծրագիր է: Այն գործարկվել է ընթացիկ ուստարում:

Խնդիր 1.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ»: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ուսումնական, մասնագիտական և մանկավարժական պրակտիկաներ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ»-ի (կարգը հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2018 թ. մայիսի 3-ի նիստում): Ուսումնական պրակտիկանների մի մասն իրականացվել է երթուղիների ձևով, ինչպես նաև Ծաղակաձորի և Բյուրականի հանգրվաններում, 5-14 օր տևողությամբ:

Հաշվի առնելով ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները՝ կնքվել է 25 նոր պայմանագիր, ինչի արդյունքում ընդլայնվել է մասնագիտական պրակտիկայի անցկացման վայրերի աշխարհագրությունը:

Մանկավարժական պրակտիկական անցկացվել է Երևանի դպրոցներում, վերակնքվել է 14 պայմանագիր: Մանկավարժի որակավորման 2016-2020 թթ. ուսումնական պլանի համաձայն՝ ԵՊՀ 10 ֆակուլտետների՝ լրացուցիչ մանկավարժի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար առաջին անգամ կազմակերպվել է մանկավարժական պրակտիկա:

Խնդիր 1.2-ով սահմանված է. «Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսա-

կան կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով»: Այս գործողության առնչությամբ իրականացվել է զգալի աշխատանք: Մասնավորապես, ERASMUS+PRINTeL նախագծի շրջանակներում ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության Դասախոսների որակավորման բարձրացման բաժնի կողմից կազմակերպվող՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը արդիականացնելու համար Նախագծի 5 գործընկեր համալսարաններում վերապատրաստվել է 16 դասախոս՝ ակտիվ ուսուցման տարբեր նորարարական մեթոդների ուղղություններով: Նրանք այժմ ներգրավված են ԵՊՀ դասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքներում: Հաշվետու ուստարում նրանց կողմից վերապատրաստվել է 260 դասախոս՝ ակտիվ ուսուցման մեթոդներով դասավանդելու համար: Նախատեսված է ընթացիկ ուստարում վերապատրաստել ևս 300 դասախոսի:

Ամբողջովին վերափոխվել է Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության Դասախոսների որակավորման բարձրացման բաժնի գործունեության ծրագիրը, որը ներառում է ոչ միայն ակտիվ և տեխնոլոգիապես հագեցած ուսուցման վերապատրաստման դասընթացներ, այլև անհատական և խմբային խորհրդատվություններ, դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների վերաբերյալ սեմինարներ, աշխատաժողովներ, տարեկան ֆորումներ: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության 2019-2021 թթ. գործունեության ծրագիրը հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 2019 թ. փետրվարի 21-ի թիվ 6/4 որոշմամբ:

Բացի այդ, Դասախոսների որակավորման բարձրացման բաժնի համար ERASMUS+PRINTeL նախագծի միջոցներով գնվել են համապատասխան սարքավորումներ ակտիվ ուսուցման երեք լսարանների և տեսաձայնագրման մեկ ստուդիայի կահավորման համար:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը»:* ERASMUS+PRINTeL նախագծի շրջանակներում այս ուղղությամբ ևս կատարվել է զգալի աշխատանք մանկավարժական առաջավոր փորձի բացահայտման, խրախուսման և տարածման համար: Մասնավորապես՝ ԵՊՀ-ում դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների ներդրման նպատակով դասախոսների և ուսանողների կարիքները բացահայտելու համար իրականացվել են հարցումներ, որոնց մասնակցել են համալսարանի 200-ից ավելի դասախոս և մոտ 300 ուսանող: ERASMUS+PRINTeL նախագծի եվրոպական գործընկերների օգնությամբ մշակվել է դասավանդման և ուսումնառության նորարական մեթոդների խրախուսման և տարածման ներհամալսարանական ուղեցույց, ինչը պետք է տեղայնացվի ԵՊՀ-ում:

Միաժամանակ, «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» (վերանայվել և նոր խմբագրությամբ հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 27.06.2019 թ. նիստում) համաձայն, խրախուսման նպատակով, ուսումնամեթոդական

գործունեության որոշ տեսակների կատարման համար համալսարանի շուրջ 200 աշխատողի վճարվել է լրավճար, որի գումարը կազմել է ավելի քան 15 մլն դրամ: Լրավճար հատկացվել է մասնավորապես ԵՊՀ աշակերտական, ուսանողական և հանրապետական օլիմպիադաներ կազմակերպելու, միջազգային առարկայական ուսանողական օլիմպիադաներին ԵՊՀ ուսանողներին նախապատրաստելու, ՈԻԳԸ գիտական ղեկավարման և ՈԻԳԸ տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածուում ուսանողի կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարման համար: Լրավճար հատկացվել է նաև 150 դասախոսի (բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատողների), որոնք ընտրվել են ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման արդյունքներով անցկացված մրցույթով: Նրանց վճարված ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 17 մլն դրամ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով»*: Այս ուղղությամբ շարունակվել են նախորդ ուստարում սկսված աշխատանքները, և նախատեսվել է կրթափորձի կարգով մի շարք ֆակուլտետների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում ներմուծել հետազոտական բաղադրիչներ: Գործընթացը, համաձայն ԵՊՀ ռեկտորի հրամանի, մեկնարկել է ընթացիկ ուստարում:

Խնդիր 1.2-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով»: Այս գործողության կատարմանն ուղղված՝ գրագողությունը հայտնաբերելու նպատակով ԵՊՀ առանձին ֆակուլտետներում և կենտրոններում օգտագործվում են եվրոպական և ռուսական բուհերում կիրառվող ծրագրեր: Միաժամանակ, ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի 4.5 և 4.6 կետերով սահմանված է, որ գրագողության դեպքում աշխատանքը չի թույլատրվում պաշտպանության, իսկ հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:

Նույն պահանջներով դրույթներ ներառված են նաև «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում»: Երկու կարգում էլ հղմամբ տրված է, թե որ դեպքում է արձանագրվում գրագողություն:

«Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի *Խնդիր 1.3-*ով սահմանված է. **«Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը»:**

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում»: Այս գործողության իրականացմանն ուղղված՝ մշակվել է ԵՊՀ դասախոսական

կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը, որը հնարավորություն է տալիս գնահատելու դասախոսի գործունեության 3 հիմնական ոլորտները՝ կրթական, գիտական և հասարակական՝ միահյուսելով դասախոսի ինքնագնահատումը, ուսանողների կողմից դասախոսի գնահատումը, դասախոսի գնահատումը նրա անմիջական ղեկավարի և գործընկերների կողմից: Կարգը թեև պատրաստ է, սակայն դեռևս չի գործարկվել: Միաժամանակ, ներդրված ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթի՝ «Ինտրանետ» համակարգի միջոցով շարունակվել է դասախոսական կազմի հաշվետվողականության մեխանիզմի գործարկումը:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը»*: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները ևս եղել են շարունակական: Հաշվետու ժամանակաշրջանում կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը մշակվել և փորձարկվել է իրավագիտության ֆակուլտետի ուսանողական մի քանի խմբերում:

Դասավանդման արդյունավետության և շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների առցանց համակարգի գործադրումից հետո նախատեսվել է կրթական ծրագրերի առցանց համակարգը կիրառել միայն բարձր ռիսկայնություն ունեցող և արդյունավետության ակնհայտ ցածր մակարդակ ունեցող կրթական ծրագրերի գնահատման համար, ինչը բացահայտվում է դրանց մոնիթորինգի արդյունքում:

Խնդիր 1.4-ով սահմանված է. «Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների առցանց մատուցման համար»: Այս առնչությամբ 2016/2017 ուստարում ստեղծվել է ԵՊՀ «Moodle» ուսուցման կառավարման համակարգի (ՈւԿՀ) և «Ինտրանետ»/«ՍուպերՎիզիոն» (Intranet/SuperVision) համակարգերի միջև կապ ապահովող մոդուլ, որը հնարավորություն է տալիս «Ինտրանետ» համակարգում գրանցված ուսանողներին և դասախոսներին մուտք գործել ՈւԿՀ-ում իրենց համար նախատեսված դասընթացներ: Այն մասնավորապես ապահովում է «Ինտրանետ»/ «ՍուպերՎիզիոն» համակարգերում գրանցված օգտատերերի և դասընթացների սինխրոնիզացում ՈւԿՀ-ի հետ: «Moodle» ծրագրով իրականացվում է մոտ 130 դասընթաց:

Վերոնշյալ խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Վեբ-րապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար», որի շրջանակներում 2018/2019 ուստարում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրով իրականացվել է երկու դասընթաց.

ա) «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» (32-ժամյա դասընթաց), որը նախատեսված է ինչպես սկսնակ, այնպես էլ որոշակի փորձառություն ունեցող դասախոսների համար: Որպես բազային

միջավայր դիտարկվում է «Moodle» հարթակը: Դասընթացն ավարտվել է դասախոսների կողմից ավարտական նախագծերի մշակմամբ, դրանց գնահատմամբ և թեստավորմամբ: Վերապատրաստվել է 68 դասախոս (5 խումբ):

բ) «Google Classrom-ը հեռավար կրթության համատեքստում» (20-ժամյա դասընթաց), որի նպատակն է «Google Classroom»-ի օրինակով դիտարկել ու վերլուծել ժամանակակից կրթական համակարգի՝ հեռավար ուսուցման մեթոդաբանական խնդիրները, հստակեցնել հեռավար կրթական աշխատանքի համար անհրաժեշտ գործիքակազմը: Դասախոսները տիրապետել են «Google Classroom»-ում դասընթաց ստեղծելու, վարելու և գնահատելու հմտություններին: Դասընթացն ավարտվել է թեստավորմամբ: Վերապատրաստվել է 8 դասախոս (1 խումբ):

Նախատեսվում է դասընթացների շարունակական իրականացում:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար»*: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է սույն գործողության իրականացումը՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի»: Ըստ նշված կարգի 3-րդ բաժնի 3.1 կետի՝ ԵՊՀ աշխատողներին ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվում է

լրավճար: Մասնավորապես՝ լրավճար հատկացվում է ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄ-ի կողմից երաշխավորված բուհական դասագրքերի՝ ԵՊՀ համացանցային պորտալում («Ինտրանետ» հաշվետվողականության համակարգում) ներդրման համար: Հաշվետու ժամանակաշրջանում «Ինտրանետ» համակարգում ներդրվել է 40-ից ավելի աշխատություն (էլեկտրոնային նյութեր և բուհական դասագրքեր), ինչի համար 38 դասախոսի հատկացվել է լրավճար, որի ընդհանուր գումարը կազմել է 4.520.000 դրամ:

Խնդիր 1.4-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով»: Այս գործողության կատարման նպատակով ԵՊՀ-ում սկսվել է ուսանողներին դասախոսությունները, առաջադրանքը և նյութերը էլեկտրոնային ձևով տրամադրելու ակտիվ գործընթացը (Տե՛ս սույն զեկույցի՝ Խնդիր 1.4-ի 1-ին գործողության վերաբերյալ հատվածը):

Խնդիր 1.4-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով»: Այս գործողության կատարման նպատակով հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի բոլոր հոսքերում կիրառվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի իրականացման հեռավար եղանակը:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները»:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսուցանվող ռեսուրսների և ծրագրային գործիքների թարմացում, մասնավորապես՝ ավելացվել և վերամշակվել են «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի թեմաները, հնարավորություն է ստեղծվել եզրափակիչ գնահատականի նիշը ստանալ կուրսակային եղանակով՝ կատարելով համապատասխան աշխատանքներ թեստերի հարցերին պատասխանելու միջոցով:

Նշված մոտեցումը փորձնական (պիլոտային) եղանակով հեռավար ձևով 8 թեմաների շրջանակներում իրականացվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Պատմության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում:

Խնդիր 1.5-ով սահմանված է. «Ստեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»: Ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու ուստարում այս խնդրի իրագործմանն ուղղված որևէ աշխատանք չի իրականացվել՝ ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով:

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:

«Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի Խնդիր 2.1-ով սահմանված է. «Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը»:

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով»: ԵՊՀ-ում իրականացվող հետազոտական գործունեության գնահատումը կրում է պարբերական բնույթ՝ համաձայն ԵՊՀ-ում ներդրված և արդեն գործող գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշների, որոնք ամփոփված են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 2.1 կետում: Ըստ նշված կարգի՝ գործում են պարբերականների դասակարգմամբ պայմանավորված չափանիշներ՝ հիմք ընդունելով պարբերականների՝ միջազգային գիտական շտեմարաններում ընդ-

գրկված լինելը: Այդ չափանիշներում դեռևս ընդգրկված չեն տվյալ աշխատության վրա կատարված հղումները:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար»: Ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար ԵՊՀ-ում գործում են համապատասխան մեխանիզմներ, որոնք պարբերաբար վերանայվում և բարելավվում են: Ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը պարբերաբար հստակեցվում է ըստ Clarivate Analytics գործակալության ամենամյա *Journal Citation Reports (JCR)* զեկույցի:

Խնդիր 2.1-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը»: Ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական ծրագրերում խրախուսելու համար, համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» (նոր խմբագրությամբ) 2.1 կետի աղյուսակ 1-ի 10-րդ կետի, նախատեսված է լրավճար բոլոր այն ղեկավարների համար, ովքեր իրենց ասպիրանտներին կընդգրկեն նշված ծրագրերում: Կարգի 3.1 կետի աղյուսակ 2-ի 9-րդ կետի համաձայն՝ նախատեսված է խրախուսում նաև մագիստրանտներին գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկելու համար:

4-րդ գործողությամբ նախատեսված է. «Խրախուսել ՈԻԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանք-

ների ղեկավարումը»: ՈԻԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքի ղեկավարումը, որը ներկայացվում է ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածուում տպագրված աշխատանքներով, պարբերաբար խրախուսվում է՝ համաձայն վերոնշյալ կարգի 3.1 կետի աղյուսակ 2-ի 8-րդ և 9-րդ կետերի:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում»:* Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի իրականացման բարելավմանն ուղղված գործընթացները շարունակական բնույթ ունեն: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել և ընթացիկ ուստարում մշակվել է ռազմավարություն՝ որոշ ֆակուլտետներում մասնագիտական դասընթացներում փորձնական (պիլոտային) տարբերակով հետազոտական բաղադրիչ ներդնելու համար:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով»:* Այս խնդրով նախատեսված առնվազն 5 Start-up լաբորատորիաներից 3-ը ստեղծվել և գործում են Ֆիզիկատեխնիկական կենտրոնի կազմում: Անցած տարվանից գործում է Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվել և համապատասխան գործընթացներ են սկսվել Ֆարմացիայի ինստիտուտում դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն ստեղծելու ուղղությամբ:

Այդ նպատակով Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական աջակցության տրամադրման հայտն արդեն բավարարվել է:

Խնդիր 2.2-ով սահմանված է. «Ձարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում»:

Հանրապետության տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտաշխատողներին որպես մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավար ներգրավելը կրում է կայուն շարունակական բնույթ:

Այս գործողության իրականացմանը միտված՝ մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում ներգրավված են հանրապետության մոտ 350 առաջատար գիտաշխատողներ տարբեր գիտահետազոտական կազմակերպություններից:

2-րդ գործողությամբ նախատեսված է. «Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը»: Գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացման շրջանակներում ԵՊՀ ստորաբաժանումների և ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտների ու կենտրոնների կողմից իրականացվում են համատեղ ծրագրեր տարբեր ոլորտ-

ներում: Այդ մասին է վկայում ՀՀ գիտության կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներում հաղթած ԵՊՀ թեմաներում այլ գիտահետազոտական կենտրոնների աշխատակիցների ընդգրկվածության աճը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը»*: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ձեռնարկությունների հետ կրթական և հետազոտական ծրագրերի իրականացումը, որոնցից են, մասնավորապես, «Մինոփսիս» ընկերության և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի համատեղ կրթական ծրագիրը, «Հայկական ծրագրեր» ընկերության և ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի համատեղ ծրագիրը, Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի, Էկոլոգիայի ու բնության պահպանության ամբիոնի համագործակցությունը Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, «Արենի-1 քարայր» կոնսորցիումի, «Զորահ Վայնս», «Արենի», «Արմենիա Վայնս» գինեգործարանների հետ, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ISTC կենտրոնի հետ համատեղ իրականացվող «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագիրը:

Խնդիր 2.3-ով սահմանված է. *«Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը»*:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղա-*

դրիչ»: Այս առնչությամբ ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման ղեկավարներն իրենց հաշվետու զեկույցում պարտադիր ներառում են միջազգայնացման վերաբերյալ տվյալներ (համատեղ ծրագրեր, հոդվածներ, համատեղ գիտաժողովներ):

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները»*: Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակումները խրախուսվում են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» համաձայն: Շարունակաբար հստակեցվում է միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականների ցանկը ըստ «Web of Science» և «Scopus» շտեմարանների: Նշված շտեմարաններում հրապարակումների քանակը նախորդ ուստարվա համեմատ աճել է մոտ 15 %-ով:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը»*: Օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը հաշվետու ժամանակահատվածում չի ավելացել. միայն անգլերենով հրատարակվել է «ԵՊՀ գիտական տեղեկագրի» 2 սերիա, իսկ համալսարանական գիտական մյուս սերիաները եռալեզու են:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությանը»*: Շնորհիվ ներդրված «Երևանի պետական համալսարանի կողմից

կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի» (հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մայիսի 26-ի նիստում և կիրարկվում է 2017 թ. սեպտեմբերի 1-ից)՝ հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ի կազմակերպած միջազգային գիտաժողովների թիվը մոտ 40 %-ով ավելացել է:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը»:* Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության շարունակականության և խորացման մասին է վկայում այն փաստը, որ համատեղ հետազոտական ծրագրերի թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է 26 %-ով:

Խնդիր 2.4-ով սահմանված է. «Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Ջալգրուրգյան սկզբունքներին»:

3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը»:* ԵՊՀ-ն շարունակաբար նպաստում է ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցության իրականացմանը՝ մասնավորապես գործուղելով ասպիրանտներին գործընկեր կազմակերպություններ: Արդյունքում՝ անցած ուսումնական տարվա համեմատ ասպիրանտների գործուղումների թիվն աճել է մոտ 40 %-ով:

4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջա-*

վայր»: ԵՊՀ-ն միջոցներ է ձեռնարկում (հնարավորության սահմաններում) ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր ստեղծելու ուղղությամբ՝ իր միջոցների կամ համաֆինանսավորմամբ միջազգային և պետական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում պարբերաբար թարմացնելով լաբորատորիաները նոր սարք-սարքավորումներով, գրադարանային ռեսուրսները՝ նոր գրականությամբ, օժանդակելով դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը և այլն: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում նման գործընթացներ են իրականացվել Քիմիայի, Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի, Կենսաբանության ֆակուլտետներում և Ֆարմացիայի ինստիտուտում:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, իրթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Հանրային ներգրավում և ծառայություններ» ռազմավարական նպատակի *Խնդիր 3.1*-ով սահմանված է. **«Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը»:**

Խնդիր 3.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»:* 2018/2019 ուստարում շարունակվել են ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների, ինչպես նաև ԵՊՀ զիտակրթական ստորաբաժանումների ղեկավարների հետ աշխատանքը և պարբերաբար կազմակերպվող հանդիպումները: ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ պարբերական աշխատանքը նպաստել է հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»:* Շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման

ուղղությամբ տարվող աշխատանքները՝ համալսարանի ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն:

Երևանի պետական համալսարանի պորտալում, որը ստեղծվել է 2006 թվականին, ընդգրկված են ավելի քան 100 կայք ու ենթակայք: Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը.

- «Թարգմանություն և գիտություն» գիտաժողովի կայքը (<http://www.etc.yasu.am>),

- «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի կայքը (<http://www.math.yasu.am/asds>):

2018/2019 ուստարում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացել են 1918 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 28.688 հրապարակում:

Կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 12.528-ի (ըստ սերվերի ներքին վիճակագրական գործիքի):

Թարմացվել են ֆակուլտետների պաշտոնական տեսահոլովակները և աշխատակիցների պաշտոնական լուսանկարները:

Պարբերաբար լուսաբանվել են ԵՊՀ-ում գործող կենտրոնների, լաբորատորիաների աշխատանքները, ինչպես նաև գիտական և այլ ձեռքբերումները:

Նշված համատեքստում ԵՊՀ-ում պահվող բոլոր կինո (1000 րոպե) և աուդիո (83 ֆայլ) ժապավենների թվայնացումից հետո դրանք առանձնացվել և մոնտաժվել են 55 ֆիլմի տեսքով, տրվել է դրանց նկարագրությունը: Մասամբ խմբագրվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» կայքի բովանդակությունը:

Թարմացվել են «Դիմորդ» (<http://www.yasu.am/entrant>), «ԵՊՀ կառուցվածք» (<http://www.yasu.am/ysu>), «ԵՊՀ հրատարակչություն» (<http://publishing.yasu.am/>), «ԵՊՀ մասնագիտական խորհուրդներ» (<http://councils.yasu.am>) և այլ կայքեր: Թարմացվում է ԵՊՀ էլեկտրոնային հեռախոսագիրքը (<http://www.phone.yasu.am>):

Ապահովվելով թափանցիկության սկզբունքը՝ շարունակական աշխատանք է իրականացվում «ԵՊՀ փաստաթղթեր» (<http://doc.yasu.am>) կայքում. տեղադրվում են ոչ միայն ԵՊՀ կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, ծրագրերը, հրամանները, հաշվետվությունները, ֆինանսական փաստաթղթերը, այլև ներկայացվում են կոլեգիալ մարմինների (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԵՊՀ գիտական խորհուրդ, ֆակուլտետների և բուհում գործող այլ ստորաբաժանումների գիտական խորհուրդներ) նիստերի արձանագրություններն ու որոշումները:

ԵՊՀ կայքի «Ռետրո պատկերասրահ» բաժնում տեղադրված են համալսարանի և համալսարանականների մասին արխիվային լուսանկարներ, իսկ «Պատկերասրահը» պարբերաբար թարմացվում է բուհում տեղի ունեցող իրադարձությունների նոր լուսանկարներով:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է

համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 17 ձևաթղթերը տեղադրվել են օրական երկու անգամ: Էլեկտրոնային տարբերակով տեղադրվել է 2019/2020 ուստարվա առկա ուսուցման համակարգ ընդունված դիմորդների շարժը՝ ըստ օրերի: Տեղադրվել են նաև 2019 թ. ԵՊՀ առկա ուսուցման համակարգ ընդունվածների ցուցակները:

Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 2771 նյութ՝ մոտ 1000-ով ավելի նախորդ ուստարվա համեմատ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 192 հայտարարություն:

Խնդիր 3.1-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը»*: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և ընդունվել է միասնական՝ «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» հայեցակարգը: Կատարվել են աշխատանքներ գովազդային նյութերի մշակման և բազմացման ուղղությամբ: Հրատարակվել են ԵՊՀ-ին վերաբերող անգլալեզու բուկլետներ, տեղեկատվական ֆլայերներ, օրացույցներ, թարմացվել և վերահրատարակվել է ԵՊՀ տեղեկատուն:

ԵՊՀ գիտխորհուրդը հաստատել է համալսարանի բրենդբուքը: ԵՊՀ 100-ամյակի առիթով մշակվել և տպագրվել են համալսարանի տարբերանշանով տարբեր նյութեր:

Խնդիր 3.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը»:

2018/2019 ուստարում շարունակվել է ԵՊՀ-ին հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելու գործընթացը: ԵՊՀ-ի վերաբերյալ բացասական բովանդակության գրառումները ստացել են պատասխաններ՝ հայտարարությունների տեսքով:

«Միջազգային» կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրվել են ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող հայտարարություններ: ԵՊՀ պորտալում հրապարակված նորությունները տեղադրվել են ԵՊՀ «Facebook»-ի և «Twitter»-ի էջերում: Սոցցանցերում ակտիվորեն գործարկվում են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ «Facebook»-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել, էջի հետևորդների թիվը հասել է 52.000-ի՝ նախորդ ուստարվա համեմատ աճելով մոտ 10.000-ով:

Շարունակվել է «Twitter» (https://twitter.com/YSU_official) սոցիալական կայքի վարումը: Մուտքագրվել է շուրջ 2.224 նորություն (եռալեզու): 2017 թ. մայիսից գործարկվել է ԵՊՀ «Ինստագրամի»՝ https://www.instagram.com/ysu_yerevan_state_university/ պաշտոնական էջը, որի հետևորդների թիվը 2019 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հասել է 1.760-ի: ԵՊՀ-ի «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 193 տեսանյութ: Մուտքագրված տեսանյութերի ընդհանուր թիվը հասել է 392-ի:

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումները և նախապատրաստական ծրագրերը:

Հանրային հետաքրքրության արժանի միջոցառումների մասին մամուլի հաղորդագրությունները, պատրաստի նյութերն ու լուսանկարները (39 հրավեր և 197 հաղորդագրություն) ուղարկվել են հայաստանյան ՁԼՄ-ներին, ինչի արդյունքում աճել է ԵՊՀ-ի մասին դրական գրառումների ու հոդվածների քանակը:

Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ներով հրապարակվել և լուսաբանվել են ԵՊՀ-ում կազմակերպվող իրադարձային միջոցառումները: Հաշվետու ուստարվա ընթացքում ստացվել է հանրային նշանակության միջոցառման 280 հայտ:

Իրականացվել է հայաստանյան տպագիր ՁԼՄ-ներում, ինտերնետային կայքերում և հեռուստաընկերություններում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 478 նյութ, իսկ ինտերնետային կայքերում՝ 3790:

ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահների հեռուստաէկրաններին տեղադրվել են համալսարանի մասին պատմող ֆիլմեր, ինչպես նաև տեղեկատվություն և հայտարարություններ կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 231 էր:

Խնդիր 3.1-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային

ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները»: Սոցիալական պատասխանատվության շրջանակներում ԵՊՀ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝ 2018 թվականին շարունակվել է ֆինանսական աջակցությունը ապրիլյան պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին:

Հաշվետու ուստարում շարունակվել է գոհված 23 զինծառայողի 55 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ԵՊՀ ծրագիրը: Յուրաքանչյուր գոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական տրվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային տրվում է 20.000 ՀՀ դրամ:

Շարունակվել են նաև արդեն ավանդույթ դարձած ծառատունկը Արցախում, նվիրատվությունները դպրոցներին և գյուղական համայնքներին, ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործունեությանը վերաբերող խնդիրներն ընդգրկված են «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգում» (հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 2017 թվականի հուլիսի 6-ի նիստում):

Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը»:* Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ աշխատողների համա-

ցանցային ներքին տիրույթի (intranet.yasu.am) շահագործումն ապահովել է ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետության բարձրացումը: Այդ նպատակով նաև ընդլայնվել և կատարելագործվել է ԵՊՀ աշխատողների էլեկտրոնային փոստի համակարգը: Ներքին կորպորատիվ արդյունավետ հաղորդակցման մակարդակի բարձրացմանը նպաստել է ռեկտորատի ակտիվ համագործակցությունը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ: Միաժամանակ, ներքին կորպորատիվ հաղորդակցությունն ավելի արդյունավետ դարձնելու համար ԵՊՀ բոլոր աշխատակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացվել է ԵՊՀ-ում տեղի ունենալիք իրադարձությունների և կարևոր նորությունների մասին: ԵՊՀ պորտալի տարբեր կայքեր, ինչպես նաև սոցիալական ցանցերի պաշտոնական էջերը նույնպես ապահովել են ներքին կորպորատիվ հաղորդակցության բարձր մակարդակը:

Վերոնշյալ գործողության առնչությամբ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը Facebook-ի իր պաշտոնական էջով ԵՊՀ աշխատողներին մշտապես իրազեկել է համալսարանում տեղի ունեցող այն աշխատանքների մասին, որոնք վերաբերել են ԵՊՀ կոլեկտիվի աշխատանքային, սոցիալական և իրավական շահերին:

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը»*: 2018/2019 ուստարում ԵՊՀ հրատարակած գրքերից տրամադրվել են (նվիրա-

տվությունների կարգով) հայաստանյան և Արցախի գրադարաններին: Հանրապետական և միջազգային ցուցադրությունների և տոնավաճառների ընթացքում նույնպես ԵՊՀ հրատարակած գրականությունից որոշակի քանակ տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց: Ուստարվա ընթացքում իրականացվել է 2502 միավոր գրականության նվիրատվություն:

Խնդիր 3.2-ով սահմանված է. «Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա կրթական ծրագրերի մշտադիտարկում»: Այս առնչությամբ պարբերաբար կատարվում են վերլուծություններ: 2017/2018 ուստարում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել էր երկու համապարփակ հաշվետվություն.

ա) «Լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնասիրում».

բ) «Հաշվետվություն հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կրթական ծրագրերի մշտադիտարկման վերաբերյալ»:

Հաշվետվությունները տեղադրված են «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքէջում (extension.yu.am):

2018/2019 ուստարում շարունակվել են աշխատանքները երկու ուղղությամբ էլ: Դրանք նպատակաուղղված էին Հետբուհական լրա-

ցուցիչ կրթության (ՀԼԿ) վարչության զբաղվածությունն ապահովելուն և գործատուների հետ ստեղծված հարաբերությունները զարգացնելուն, ինչպես նաև գործող ծրագրերը լրամշակելուն և ժամանակի պահանջներին համապատասխանեցնելուն:

Հաշվետու ուստարում վերլուծության է ենթարկվել ԵՊՀ կարևորագույն լրացուցիչ կրթության ծրագիրը՝ դասախոսական կազմի վերապատրաստումը: Գնահատելով հանդերձ նորացված ծրագրի արդյունքները՝ վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ: Հարցը համակողմանիորեն քննարկվել է բոլոր մակարդակներում, և մշակված փաստաթուղթը ներկայացվել է ԵՊՀ գիտական խորհրդին: Վերջինս 2019 թ. փետրվարի 21-ին հաստատել է «Երևանի պետական համալսարանի հետբուհական լրացուցիչ կրթության վարչության 2019-2021 թթ. գործունեության ծրագիրը», որն իրագործման է երաշխավորվել հաջորդ ուսումնական տարվանից:

Նույն խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը»*: Այս առումով 2018/2019 ուստարում մշակվել է 3 ծրագիր՝ նախատեսված ա) ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի համար, բ) ՀՀ պաշտպանության նախարարության համար, գ) ՀՀ միգրացիոն ծառայության համար:

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» նպատակի *Խնդիր 4.2*-ով սահմանված է. **«Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ»:**

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր»:*

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության աշխատողներն անցել են մասնագիտական վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներ, մասնակցել են կլոր սեղան-քննարկումների, ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի, «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի քննարկումներին: Նախատեսվում է ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնի աշխատակազմի համար առաջիկայում ևս կազմակերպել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր՝ իրավակիրառական պրակտիկայում աշխատանքային իրավահարաբերություններում ծագող ամենատարբեր խնդիրների և դրանց լուծումների թեմայով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար»*: Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել են ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի աշխատողների աշխատանքի նկարագրերը, որոնք 2018/2019 ուսումնական տարվանից կցվել են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերին՝ որպես անբաժանելի հավելված: Ընթացքի մեջ է ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների աշխատանքի նկարագրերի մշակումը:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ»*: Շարունակվում են ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ համակազմերի և ԵՊՀ գրադարանի աշխատողների մասնագիտական վերապատրաստման ու որակավորման բարձրացման համալիր ծրագրի մշակման և պլան-ժամանակացույցի կազմման աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել նշված տարակարգերի աշխատողների մասնագիտական վերապատրաստում և ատեստավորում: Գործընթացը կրելու է պարբերական բնույթ և ներառելու է ԵՊՀ բոլոր ստորաբաժանումների աշխատողներին:

Խնդիր 4.3ով սահմանված է. *«Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»*:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը»*: Համաձայն

«ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի»՝ ԵՊՀ-ում գործում են դասախոսներին տրվող լրավճարի համապատասխան մեխանիզմներ, որոնք պարբերաբար վերանայվում և բարելավվում են: Մասնավորապես՝ հաշվետու ուսումնական տարում մշակվել և կարգում ընդգրկվել են ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգի (e-learning.yasu.am) կիրառմամբ դասախոսելու համար ԵՊՀ դասախոսներին լրավճար հատկացնելու մեխանիզմները:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության*»: 2018 թ. սեպտեմբերի 1-ից ԵՊՀ աշխատողների հիմնական ամսական աշխատավարձի չափը բարձրացվել է 15 տոկոսով:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր*»: Այս նպատակով ԵՊՀ-ն դեռևս նախորդ տարիներին ներդրել էր բժշկական ապահովագրության փաթեթը, աշխատողների երեխաների ուսման վարձերի զեղչերը, հաշմանդամ աշխատողների հավելավճարները: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն իր աշխատողների համար որևէ նոր սոցիալական ծրագիր չի ներդրել:

5-րդ գործողությամբ նախատեսված է. «*Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզատնօրհանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների*

և սովորողների համար»: Նշված գործողության կատարման ուղղությամբ պարբերաբար իրականացվում է մշտադիտարկում՝ կապված ԵՊՀ տարածքում գործող հասարակական սննդի օբյեկտներում գնագոյացման քաղաքականության և սննդի որակի հսկողության հետ: Պարբերաբար ուսումնասիրվում են նաև Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնասարտադրական բազայում ԵՊՀ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների և ուսանողների համար հանգստի կազմակերպման գնային քաղաքականության մատչելիությունը և տեղում իրականացվող սննդի որակի ապահովումը:

V. ՈՐԱԿՑԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

«Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակի *Խնդիր 5.1*-ով սահմանված է. **«Ջարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները»:**

Խնդիր 5.1-ի *1-ին գործողությամբ* նախատեսված է. **«Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները»:** Այս խնդրի կապակցությամբ 2018/2019 ուստարվա ընթացքում կատարվել են 292,4 միլիոն դրամի ներդրումներ, որոնց շրջանակներում ձեռք են բերվել 60.7 միլիոն դրամի լաբորատոր սարքավորումներ, 140.5 միլիոն դրամի սերվերներ, պրոյեկտորներ, համակարգչային գույք, համակարգչային պարագաներ, 18.3 միլիոն դրամի այլ գույք, մասնավորապես՝ տպագրական սարքեր, գրատախտակներ, տեսահսկման սարքեր, և ևս 29.7 միլիոն դրամի սարքավորումներ ստացվել են անհատույց: Նշված ժամանակահատվածում լաբորատորիաներում և լսարաններում կատարվել են 43,2 միլիոն դրամի նորոգման աշխատանքներ:

Խնդիր 5.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. **«Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները»:** Իրականացվել է 5-րդ մասնաշենքի թիվ 303, 305, 307, 308, 310, 311 գիտական լա-

բորատորիաների վերանորոգում, որի համար ծախսվել է 4.920.087 դրամ:

2018/2019 ուստարում ԵՊՀ 2 գիտահետազոտական լաբորատորիայի և 2 գիտահետազոտական ինստիտուտի համար ձեռք են բերվել ընդհանուր 65.8 մլն ՀՀ դրամ արժողությամբ թվով 39 միավոր լաբորատոր սարք-սարքավորումներ:

Խնդրի 5-րդ և 6-րդ գործողությունների ուղղությամբ (որոնցով համապատասխանաբար նախատեսված է՝ «Արդիականացնել մարզահամալիրը» և «Վերականգնել Դիլիջանի մարզաառողջարանային համալիրը») հաշվետու ժամանակաշրջանում որևէ աշխատանք չի կատարվել:

Վերոնշյալ խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ»: Այս ուղղությամբ համալսարանի տարբեր մասնաշենքերում իրականացվել են վերանորոգման և շինարարական մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել են 3-րդ մասնաշենքի 1-4-րդ հարկերի նախամուտքերը (ծախսը՝ 9.939.852 դրամ) և միջանցքները (ծախսը՝ 39.082.000 դրամ), 3-րդ մասնաշենքի գիտխորհրդի դահլիճը (ծախսը՝ 7.396.978 դրամ), 4-րդ մասնաշենքի 1-4-րդ հարկերի միջանցքները (ծախսը՝ 25.190.526 դրամ), 5-րդ մասնաշենքի 1-3-րդ հարկերի միջանցքները (ծախսը՝ 5.940.397 դրամ), դահլիճը (ծախսը՝ 2.167.246 դրամ) և թիվ 115 ու 319 սենյակները (ծախսը՝ 5.866.623 դրամ), 6-րդ

մասնաշենքի 1-3-րդ հարկերի միջանցքները (ծախսը՝ 11.797.170 դրամ), 8-րդ մասնաշենքի 0 և 3-րդ հարկերի միջանցքները (ծախսը՝ 5.273.794 դրամ), թիվ 01-010 և 012 սենյակները (ծախսը՝ 5.513.633 դրամ): Իրականացվել են նաև 8-րդ մասնաշենքի արտաքին պատերից 0 հարկ խոնավության թափանցման վերացմանն ուղղված աշխատանքներ (ծախսը՝ 2.049.520 դրամ):

Խնդիր 5.1-ի 9-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել հանրակացարանային բազան»*: Իրականացվել են Ծարավ Աղբյուրի 55/5 հասցեում գտնվող ուսանողական հանրակացարանի հիմնանորոգման և կաթսայատան կառուցման աշխատանքներ (ծախսը՝ 202.826.900 դրամ): Ուսանողական հանրակացարանը շահագործման է հանձնվել ընթացիկ ուստարվա սկզբին (2019 թ. սեպտեմբերին): Այնտեղ կեցության և կենցաղի սպասարկման վճարովի ծառայություններ են մատուցվում ԵՊՀ-ի (առաջնահերթ) և այլ բուհերի ուսանողներին: Շուրջ 300 ուսանողի համար նախատեսված հանրակացարանի բոլոր սենյակները (142 սենյակ՝ 1, 2, 3 և 4 տեղանոց) ապահովված են համապատասխան գույքով և սանհանգույցով:

Խնդիր 5.2- ով սահմանված է. ***«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները»***:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ»*: Չնայած որ նշված

գործողության կատարումն ըստ ժամանակացույց-պլանի նախատեսված էր ավարտել 2018 թ. դեկտեմբերին, սակայն արդեն հոկտեմբերից ԵՊՀ ֆակուլտետներում սկսել են օգտվել «Moodle» համակարգից և ուսումնական գործընթացը կազմակերպել առցանց ձևով, որի նպատակը դասախոսների և ուսանողների համատեղ առցանց աշխատանքն է: «Moodle» էլեկտրոնային ուսուցման համակարգն ուսանողներին հնարավորություն է ընձեռում գտնելու իրենց անհրաժեշտ նյութերը, մասնակցելու ֆորումների և տեսագիտաժողովների, քննությունների, ներկայացնելու կատարված հանձնարարությունները և այլն:

Այս համակարգի օգնությամբ հարթակ մուտք գործող ուսանողն ամբողջական տեղեկատվություն է ստանում դասընթացի ընդհանուր նկարագրի մասին, տեղեկանում է առաջադրանքների կատարման համար սահմանված ժամկետներին և այն աղբյուրներին, որոնք անհրաժեշտ են տվյալ թեման յուրացնելու համար: Մովորողներին տրվում են գործնական առաջադրանքներ՝ վարժությունների, խնդիրների տեսքով:

«Moodle»-ն ապահովում է կրթական գործընթացի արդիականացումը՝ մեծապես նպաստելով ուսանողների հետ աշխատանքի արդյունավետությանը: Այս հարթակում հստակ երևում են բոլորի անհատական աշխատանքները: Ուսանող-դասախոս կենտրոնացված կապի շնորհիվ հարթակում ուսանողները հնարավորություն ունեն հարցեր առաջադրելու և ստանալու դրանց պատասխանները: Հարթակում, բացի տեքստային նյութից, հնարավոր է տեղադրել նաև տեսանյութեր:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը»: Հաշվետու ժամանակահատվածում էապես փոխվել է ԵՊՀ ներքին համակարգչային օպտիկամանրաթելային ցանցի կառուցվածքը: Մասնաշենքերում տեղադրվել են ցանցի համակցման նոր սերնդի սարքավորումներ, որի արդյունքում մասնաշենքերի միջև ցանցի թողունակությունը հասցվել է մինչև 10 Գբիթ/վ-ի: Զուգահեռ իրականացվել են ինտերնետ մուտքային հանգույցի փոփոխության աշխատանքներ, որի արդյունքում հնարավոր է ապահովել մուտքային և ելքային ինտերնետի մինչև 200 Մբիթ/վ արագություն:

Աշխատանքներ են տարվել նաև Wi-Fi ցանցի ընդլայնման ուղղությամբ, հին սարքավորումները հիմնականում փոխարինվել են նոր սերնդի սարքավորումներով, բարելավվել է Wi-Fi ցանցով սփռվող ինտերնետի արագությունը՝ արդեն ընթացիկ ուստարում հասնելով մինչև 100 Մբիթ/վ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը»: Հաշվետու ժամանակահատվածում սերվերային ռեսուրսները համալրվել են նոր սերվերով (HP ProLiant DL 360 Gen 10 (64 GB RAM)), որն ապահովում է ուսումնական գործընթացի կառավարման «Supervision» էլեկտրոնային համակարգի անխափան աշխատանքը:

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը»: Նոր անվտանգային համակարգի Firewall Paloalto PA 820 սարքի ձեռքբերման և այն համապատասխան կարգավորումների բերելու արդյունքում ԵՊՀ ներքին տեղեկատվական համակարգերն ու ԵՊՀ կայքերն առավել պաշտպանված են:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը»: Հաշվետու ժամանակաշրջանում «KOHА» համակարգ է մուտքագրվել 49276 անուն գիրք, թվայնացվել՝ 89 գիրք: Նախատեսվող ծավալներով աշխատանքի դեպքում 2020 թ. վերջում համահավաք քարտարանում արտացոլված կլինի ԵՊՀ գրադարանում առկա ողջ գրքային ֆոնդը:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին»: ԵՊՀ-ն շարունակել է իր անդամակցությունը «IFLA» և «LIBER» միջազգային գրադարանային ասոցիացիաներին, ինչպես նաև Հայաստանի գրադարանների ասոցիացիային և Հայաստանի էլեկտրոնային գրադարանների ասոցիացիային («ELCA»): Գրադարանը գերմանական «Subito» կազմակերպության միջոցով կատարում է էլեկտրոնային հոդվածների սպասարկում: Ծրագրի շրջանակներում 2018/2019 ուստարում սպասարկվել է ավելի քան 3500 գիտական հոդված: Գրադարանը հնարավորություն է

ստացել ազատորեն մուտք գործելու ռուսական polpred.ru կայք, որտեղ առկա են ավելի քան 3000 ռուսաստանյան թերթերի էլեկտրոնային բազաներ:

Խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը»*: Գրադարանը շարունակել է նոր գրականության համալրումը: Գրադարանային ֆոնդը համալրվել է 2465 անուն 8172 միավոր գրականությամբ: Բարերարների կողմից ստացվել է ավելի քան 9000 միավոր արժեքավոր գրականություն, որը մուտքագրման փուլում է:

Խնդրի *10-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը, ընդլայնել ընթերցասրահների և համակարգչային սրահների աշխատաժամերը»*: Հաշվետու ուստարում ընթերցասրահների աշխատաժամանակը երկարացվել է մինչև ժ. 19.00-ն: Թիվ 501 ընթերցասրահում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, նախատեսվել են հատվածներ խմբային քննարկումների համար: Պատշգամբներում նախատեսվել են պարապելու համար հատվածներ: Ընթերցասրահում նաև տեղադրվել է օդափոխման համակարգ:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

«Որակյալ ծառայություններ» ռազմավարական նպատակի *Խնդիր 6.1*-ով սահմանված է. «*Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով*»:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները*»: 2010 թ.-ից (ԵՊՀ ռեկտորի հրամանով) ուսանողներին մատուցվող խորհրդատվական գործընթացը կազմակերպելու նպատակով նախատեսված է կուրատորական աշխատանք: Հաշվի առնելով, որ խորհրդատվության կարիք առավելապես ունեն 1-ին կուրսեցիները՝ ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերով ևս նախատեսված է նշված աշխատանքի ձևը: Գործընթացը բարելավման կարիք ունի:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ մի շարք ստորաբաժանումների (Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն, Շրջանավարտների և կարիերայի կենտրոն) և ուսանողական կառույցների կողմից իրականացվել են ուսանողների զարգացմանն ուղղված դասընթացներ և կրթական բնույթի այլ ծրագրեր: Որոշ ծրագրեր իրականացվել են արտահամալսարանական մի շարք

կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցության շրջանակներում:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը ՀՀ պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության կառավարության հետ ունեցած համագործակցության շրջանակներում կազմակերպել է մի շարք դասընթացներ, կրթական բնույթի հանդիպում-քննարկումներ և այլ ծրագրեր:

Ուսանողական խորհրդի կողմից իրականացված «Հաջողության նախագիծ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 12 հանդիպում գիտության, կրթության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրել են հաջողության իրենց բանաձևը և փորձը: Հաշվետու ուսումնական տարում իրականացված սեմինար-դասընթացներին մասնակցել է ավելի քան 1500 ուսանող: Ուշագրավ են հատկապես օտար լեզուների՝ անվճար հիմունքներով կազմակերպվող դասընթացները (ռուսներեն, անգլերեն, ադրբեջաներեն և այլն):

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից ուսանող-գործատու ձևաչափով կազմակերպվել են մի շարք տեղեկատվական հանդիպումներ (մասնավորապես՝ «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի ներկայացուցիչների, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի, ME&A Inc. ընկերությունների հետ և այլն, որոնց մասնակցել է 42 համալսարանական), այցելություններ կազմակերպություններ (մասնավորապես՝ «Էֆ-Դի-Էյ լաբորատորիա» ՍՊԸ, «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ, հայաստանյան աշխատաշուկայի առաջատար կազմակերպություններ «Պիքսարտ» և «Բիլայն» ընկերու-

թյուններ և այլն (մասնակիցների ընդհանուր թիվը՝ 184)): Ուստարվա ընթացքում 452 համալսարանական մասնակցել է մի շարք սեմինար-դասընթացների (օր.՝ Քեյ-Փի-Էմ-Ջի)-ի օրեր ԵՊՀ-ում, «Ներկայացման հմտություններ», «Գաղափարից՝ բիզնես պլան», «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման, «Հաջողությունը մեր մեջ է» և այլ թեմաներով):

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները»:* Այս գործողության իրագործման նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության կողմից ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում, կենտրոններում և ինստիտուտներում պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են խորհրդատվական բնույթ ունեցող միջոցառումներ, հանդիպում-քննարկումներ:

Ուսանողական խորհուրդը կազմակերպել և իրականացրել է առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված «Իրազեկ ուսանող» ծրագիրը, որին մասնակցել է 1400 առաջին կուրսեցի: Իրականացվել է նաև Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կողմից կազմակերպված «Իրազեկ ավագ» երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը ԵՊՀ կուրսերի ավագներին ներհամալսարանական գոծընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն էր: Ծրագրի ընթացքում վերապատրաստվել են ԵՊՀ ավելի քան 70 կուրսերի ավագներ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները»: Այս նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի օժանդակությամբ ստեղծվել և գործում են Բնապահպանական, Ռազմական ակումբները և Ավագների խորհուրդը: Ավանդաբար կազմակերպվող ծրագրերից է Արցախի Հանրապետությունում անցկացվող «Ուսանողական ռազմական բանակում»-ը, որի նպատակն է զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակությանը, տեսական և գործնական դասընթացների միջոցով զարգացնել ուսանողների ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքներն ու հմտությունները:

Ուսանողական խորհրդի կողմից անցկացված «Արի մրցենք» միջֆակուլտետային առաջնության շրջանակներում իրականացվել են ինտելեկտուալ, մարզական (ֆուտբոլ, շախմատ, բասկետբոլ, վոլեյբոլ և այլն) և մշակութային խաղ-մրցույթներ՝ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ», «Ամենախելացին», «Քառամարտ», «Երգող համալսարանական», «Պարող համալսարանական»: Շարունակել են գործել «Բանավեճի ակումբը» և «Զարգացում» դպրոցը:

Հաշվետու ուստարում մշակութային մի շարք ծրագրեր է իրականացրել ԵՊՀ մշակույթի կենտրոնը: Մասնավորապես՝ կազմակերպվել է «Անկախության սերնդի ձայնը» խորագրով երիտասարդ ստեղծագործողների և կատարողների առաջին հանրապետական

ուսանողական բիենալեն, որի նպատակն էր հնարավորություն ըն-
ձեռել երիտասարդությանը՝ ինքնաբացահայտվելու և պրոֆեսիոնալ
ստեղծագործական գործընթացին ծանոթանալու, նպաստել ԵՊՀ-ի,
ՀՀ և Արցախի բուհերի, ինչպես նաև մշակութային կարևոր հաստա-
տությունների միջև ձևավորված համագործակցության ընդլայնմա-
նը: Ուսանողների հետաքրքրվածությունը հաշվի առնելով՝ ձեռ-
նարկվել է «Արվեստանոց» ծրագիրը: «Մշակութային դաստիարա-
կություն» ծրագրի շրջանակներում անցկացվել են վարպետության
դասեր, ֆիլմերի և ներկայացումների դիտում-քննարկումներ: Առա-
ջին անգամ նորարարական մոտեցմամբ բեմադրվել է Տ. Չուխաջյանի
«Կարինե» օպերետը՝ էլեկտրոնային գործիքավորված տարբերակով.
այն հանդիսատեսի դատին է հանձնվել ԵՊՀ 100-ամյակին նվիրված
հոբելյանական միջոցառումների շրջանակում 2019 թ. սեպտեմբերի
26-ին: Մշակույթի աշխարհում բացառիկ իրադարձություն էր նաև
ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանի «Ժամանակի
փոխակերպումն արվեստների միջոցով» շոու-ներկայացումը, որը
տեղի ունեցավ ապրիլի 26-ին Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական
դրամատիկական թատրոնում: Հաշվետու ուստարում ԵՊՀ ուսանող-
ների մասնակցությամբ պատրաստվել (նկարահանվել) են ԵՊՀ հիմ-
նադրման 100-ամյակին նվիրված վեց երգերի տեսահոլովակներ,
որոնց թողարկումն իրականացվել է ընթացիկ ուստարում:

*Խնդիր 6.1-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Խթանել
ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացու-
ցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողա-*

կան դասընթացների համակարգը»: Այս ուղղությամբ 2018/2019 ուստարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը իրականացրել է մի շարք ծրագրեր և միջոցառումներ՝ նպատակաուղղված երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրների լուծման աջակցմանը: Ավելացվել և թարմացվել է ավելի վաղ ստեղծված Ձեռնարկությունների հետ համագործակցության պորտալի բազան, ստեղծվել են նոր գործնական կապեր բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, կնքվել են համագործակցության փոխըմբռման հուշագրեր: Մասնավորապես՝ հուշագրեր են կնքվել 4 կազմակերպությունների («ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ, «Էֆ Էմ Դի Քեյ Էլ Եվրոպա» ՍՊԸ, «Բլոքթեք» ՍՊԸ, «Էյ Ընդ Էմ Ռեյթր» ՍՊԸ) հետ, և նոր համագործակցության սկիզբ է դրվել 85-ի հետ (“Fly Armenia Airways”, «Մենեջմենթ Միքս Հայաստան» խորհրդատվական և թրեյնինգային ընկերություն, «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ, «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ և այլն):

Հաշվետու ուստարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակել է իրականացնել «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագիրը: Ծրագրի շրջանակում փոխհատուցվել են ԵՊՀ 3 ֆակուլտետի մագիստրատուրայի 16 ուսանողի 2 տարվա ուսման ամբողջական վարձավճարները: Աշխատանքային թափուր հաստիքների համալրման նպատակով կատարված աշխատանքների արդյունքում գործընկերակազմակերպությունների կողմից ներկայացված 364 դիմում-հայտի

համար կենտրոնի կողմից հավաքագրված 1900 դիմորդներից 30-ը ընդունվել է աշխատանքի: Ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ 114 ուսանող շուրջ 35 կազմակերպությունում մասնակցել է ինտերն-շիփ ծրագրերի:

8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները»: Այս ուղղությամբ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության կողմից մշտապես իրականացվել են քայլեր՝ ուղղված հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին անհրաժեշտ աջակցության և խորհրդատվության տրամադրմանը: Հաշմանդամություն ունեցող ուսանողների ազատ տեղաշարժն ապահովելու համար կառուցվել են թեքահարթակներ ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի մասնաշենքում: Վերանորոգվել են 501 և 503 ընթերցասրահների սանհանգույցները, որտեղ նախատեսվել են առանձին հատվածներ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

9-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար»: ԵՊՀ որոշ ֆակուլտետներում սովորում են նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներ: Մասնավորապես՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում վերոնշյալ ուսանողների համար հեռավար եղանակով իրականացվում են խորհրդատվություններ:

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի վերոնշյալ ուսանողներն ունեն տեսողական խնդիրներ, որոնց համար հնարավոր չէ իրականացնել խորհրդատվություն հեռավար եղանակով: Նրանց կցված են մասնագետ-դասախոսներ, որոնք խորհրդատվությունների, դասապատրաստման միջոցով իրականացնում են անհրաժեշտ աշխատանքներ սեմինարներին, ընթացիկ և եզրափակիչ քննություններին նախապատրաստվելու համար:

10-րդ գործողությամբ նախատեսված է. «*Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները*»: Այս առնչությամբ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվել է «ԵՊՀ մանրէաբանական կենսատեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը ՀՀ աշխատաշուկայում» խորագրով հանդիպում, որին ներկա են եղել հայաստանյան 8 առաջատար կազմակերպությունների («Armenia Wine» գործարան, «Պռոշյանի կոնյակի գործարան», «Բջնի և Նոյ» ընկերություն և այլն) ներկայացուցիչներ և ԵՊՀ 20 շրջանավարտ:

Գերմանական «GIZ» ընկերության հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը աջակցել է գրասենյակի պատվերով իրականացված «Հայաստանյան «կանաչ» աշխատաշուկայի գնահատումը» թեմայով զեկույցի ստեղծմանը. կենտրոնի աշխատակիցներն իրականացրել են հարցում շուրջ 100 շրջանավարտի շրջանում: Այնու-

հետև կենտրոնի կողմից կազմակերպվել է վերոնշյալ զեկույցի ներկայացում-քննարկումը կենսաբանության ֆակուլտետի, «կանաչ» աշխատաշուկայի ոլորտի փորձագետների և պատասխանատուների համար (մասնակիցների ընդհանուր թիվը՝ 36): Հանդիպման ընթացքում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ներկայացրել է նոր ծրագիր՝ միտված ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի և «կանաչ» աշխատաշուկայի միջև կապի շարունակականության ապահովմանը:

Կենտրոնը վերջին տարիների ԵՊՀ շրջանավարտների համար կազմակերպել է 3 միջոցառում (մասնակիցների ընդհանուր թիվը՝ 276): Միջոցառումներին հրավիրվել են տարբեր ոլորտների մասնագետ համալսարանականներ, ովքեր երիտասարդ շրջանավարտներին ներկայացրել են իրենց փորձը:

Հաշվետու ուստարում նաև իրականացվել է շրջանավարտների տվյալների բազայի համալրման գործընթացը:

Խնդիր 6.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ»: Այս ուղղությամբ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, Ուսանողական խորհուրդը, Ավագների խորհուրդը տարբեր ֆակուլտետներում և կրթական ծրագրերում

գրեր իրականացնող այլ ստորաբաժանումներում պարբերաբար իրականացրել են ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող միջոցառումներ:

Ուսանողական խորհուրդն առաջին կուրսեցիների համար անցկացրել է ամենամյա «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը: Ծրագրին մասնակցել է շուրջ 210 առաջին կուրսեցի: Ուշագրավ է նաև Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում իրականացված «Ուսանողների զարգացում» երկօրյա սեմինար դասընթացը:

Հաշվետու ուստարում շարունակել է լույս տեսնել «Ալեք Մանուկյան 1» թերթը, գործել են ՈւԽ կայքն ու ֆեյսբուքյան էջերը:

Ուսանողական գիտական ընկերության կողմից ԵՊՀ 100-ամյակին նվիրված ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է մասնագիտական ճամբար՝ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողների համար, և «Սոցթեմփ 2019» ամենամյա մասնագիտական աշխատաժողով՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների համար:

Խնդիր 6.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը»: Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի և Ուսանողական գիտական ընկերության կողմից Արցախի Հանրապետությունում անցկացվել է «Այսրկովկասի տարածաշրջան. մարտահրավերներ և արդի զարգացումներ» խորագրով գի-

տաժողով՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին: Գիտաժողովի նպատակն էր կատարելագործել ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների՝ գիտական աշխատանք կատարելու հմտությունները, ամրապնդել Հայաստանի և Արցախի երիտասարդ հետազոտողների միջև հաստատված կապը: Գիտաժողովին մասնակցել են 100-ից ավելի երիտասարդ հետազոտողներ՝ Արցախից և Հայաստանից:

ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության և ՀՀ կենտրոնական բանկի՝ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համագործակցության շրջանակներում կազմակերպվել է այցելություն Դրամի թանգարան, որտեղ անցկացվել է «Գնաճի նպատակադրում» խորագրով սեմինար-քննարկում: Վանաձորի պետական համալսարանի ՈԻԳԸ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Լոռու մարզի հանքարդյունաբերությունն ու զբոսաշրջությունը» խորագրով համաժողով, որին մասնակցել է 30 ուսանող:

ՈԻԳԸ գործունե աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: ԵՊՀ ՈԻԽ աշխատանքներում ներգրավված ակտիվ ուսանողները մասնակցել են ՌԴ Ստավրոպոլ քաղաքում իրականացված «Ուսանողական գարուն 2019» երտասարդական համաժողովին, որին մասնակցում էին 30 երկրների 1500 ուսանողներ:

Համալսարանականները մասնակցել են հանրապետական և համահամալսարանական մրցույթների և փառատոնների («Հանրապետության լավագույն ուսանող 2019», միջբուհական ունիվերսիա-

դա և այլն): «Հանրապետության լավագույն ուսանող 2019» հանրապետական մրցույթում ԵՊՀ 10 ուսանող զբաղեցրել են մրցանակային տեղեր:

Խնդիր 6.2-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈւԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը»: ՈւԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանք կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու սկզբունքներին և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին:

Ուշագրավ է նաև Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված «Բարբառագիտական հետազոտություններ և համեմատական բարբառագիտություն» խորագրով եռամսյա հետազոտական ծրագիրը: Մրցութային կարգով ընտրված 20 ուսանողներ հնարավորություն են ունեցել ամիսը մեկ անգամ (ընդհանուր 3 անգամ) այցելելու ՀՀ գյուղական բնակավայրեր, կատարելու դաշտային հետազոտական աշխատանք, ապա զբաղվելու համեմատական բարբառագիտության ուսումնամեթոդական ձեռնարկ-գրքույկների կազմման, խմբագրման և սրբագրման աշխատանքներով: Կազմակերպվել են գիտաճանաչողական այցեր Բյուրական, Դսեղ, Կալավան, Գառնի, Գեղարդ, Շենգավիթ, Թեյշեբանի և Արինի բերդ, որոնց մասնակցել է ավելի քան 150 ուսանող:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի *Խնդիր 7.1*-ով սահմանված է. «Ձարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով»:

Շարունակվել են աշխատանքները *խնդիր 7.1-ի 1-ին և 2-րդ գործողությունների* իրականացման ուղղությամբ, որոնցով նախատեսված է համալսարանի կառուցվածքում ստեղծել հենակետային վարժարան և նպաստել նրա շրջանավարտների ներհոսքին ԵՊՀ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար: Այդուհանդերձ, ձեռնարկված գործընթացները դեռևս ցանկալի արդյունք չեն տվել:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ձարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը»: Այս նպատակով 2018/2019 ուստարում հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վե-

րաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր («Դիմորդի ուղեցույց-2019» ձեռնարկը՝ 1000 օրինակ տպաքանակով), ինչպես նաև ԵՊՀ-ն և ֆակուլտետները ներկայացնող գունավոր բուկլետներ (10000 օրինակ տպաքանակով): Դրանք բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին:

Կատարելագործվել է դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ բակալավրիատի ընդունելության կարգը և «Դիմորդի ուղեցույցը» կայքում տեղադրելու միջոցով:

Նշված խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը»: ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար 11 տարի շարունակ կազմակերպվում և անցկացվում է հանրակրթական 14 առարկաների գծով օլիմպիադա: 2019 թ. չորրորդ անգամ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով. մասնակիցների թիվը 1-ին փուլում 2298 էր, իսկ 2-րդ փուլում՝ 349: Օլիմպիադայի անցկացման մեջ մեծ է ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների օլիմպիական հանձնաժողովների (դեկանների գլխավորությամբ) կատարած աշխատանքը: ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2019 թ. օլիմպիադայի 2-րդ փուլում հաղթած և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների արժանացած 95 աշակերտներ:

րից 19-ին, որոնք ընդունվել են ԵՊՀ վճարովի համակարգ, առաջին կուրսում համապատասխանաբար տրվել են ուսման վարձի 50, 40 և 30 % զեղչեր:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար»: ԵՊՀ ղեկավարության որոշմամբ 2019 թ. «Ամառային դպրոց» չի կազմակերպվել:

6-րդ գործողությամբ նախատեսված է. «Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան»: Համաձայն այս գործողության՝ Երևանի և մարզերի ավելի քան 120 դպրոցների 5500-ից ավելի ապագա դիմորդների համար, մասնագիտական կողմնորոշման նպատակով, կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ:

7-րդ գործողությամբ նախատեսված է. «Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով»: Դիմորդների հավաքագրման նպատակով աշխատանքներ են կատարվել ՀՀ բոլոր մարզերում, այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովվել են անհրաժեշտ տեղեկատվական նյութերով, որոնք տրամադրվել են շուրջ 100 դպրոցների:

Խնդիր 7.1-ի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը»: Այս գործողության իրականացման շրջանակներում ԵՊՀ-ի հետ պայմանագրային դպրոցների քանակն ավելացել է 4-ով: Այժմ ԵՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի Երևանի 25 և ՀՀ մարզերի 19 ավագ ավագ դպրոցների հետ: ՀՀ հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով 2018/2019 ուստարում մայրաքաղաքի 15 ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 83 հեղինակավոր և փորձառու դասախոսներ շուրջ երկու տասնյակ լրացուցիչ կրթական ծրագրով հատուկ դասընթացներ են վարել: Մինևույն ժամանակ, ՀՀ մարզերի 18 դպրոցներում ԵՊՀ դասախոսների կողմից իրականացվել է 135 առանձին դասախոսություն՝ հանրակրթական տարբեր առարկաներից:

Խնդիր 9-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում»: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ֆակուլտետների դեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի լայն ներգրավվածության շնորհիվ Երևանի և ՀՀ մարզերի 50-ից ավելի դպրոցների բարձր դա-

սարանների աշակերտների համար կազմակերպվել են 213 ակնարկային և բովանդակային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների համար մեթոդական խորհրդատվություններ:

Խնդիր 7.2-ով սահմանված է. «*Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը*»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «*Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը*»:

Այս գործողության կատարման առնչությամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված աշխատանքները վերաբերել են և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերին: Ընդունելության տեղերի քանակը պլանավորվել է ըստ վերջին երեք տարվա ընդունելության արդյունքների՝ հաշվի առնելով աշխատաշուկայում առկա պահանջարկը և զարգացման միտումները:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «*Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը*»: Այս գործողության կատարմանն ուղղված՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2019 թ. ապրիլի 11-ի նիստի թիվ 9/4 որոշմամբ հաստատ-

վել է «Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության կարգը»: Նույն նիստի թիվ 9/5 որոշմամբ հաստատվել է նաև «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

Ինչպես ամեն տարի, հաշվետու ժամանակաշրջանում ևս վերանայվել և հաստատվել են առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի ցանկերը: Մասնավորապես՝ ԵՊՀ գիտական խորհրդի վերոնշյալ նիստի համապատասխան որոշումներով 2019/2020 ուստարվա համար հաստատվել են առկա ուսուցման 112 և հեռակա ուսուցման 22 կրթական ծրագրեր:

Խնդրի *3-րդ գործողությամբ նախատեսված է. «Բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ»:* Այս գործողության կատարմանը միտված՝ բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար իրականացվել են աշխատանքներ համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ:

Խնդիր 7.3-ով սահմանված է. «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպ-

ման համալիր միջոցառումներ»:

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել ընդունելության դռնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ»:

Դռնոր երկրների ցանկի ընդլայնման նպատակով շարունակվել են քայլեր ձեռնարկվել Մերձավոր Արևելքի և մի շարք այլ երկրներում ԵՊՀ-ն ներկայացնող տեղեկատու նյութերի տարածման ուղղությամբ: Մասնավորապես՝ ԵՊՀ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության սփյուռքի բաժնի աշխատակիցների արտասահմանյան գործուղումների ընթացքում, ինչպես նաև միջնորդ կազմակերպությունների միջոցով այդ երկրների հավանական դիմորդների շրջանում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր: Այդ թեմայով դասախոսություններ են կարդացվել սփյուռքահայ և այլ համայնքներում:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել են հանդիպումներ Հայաստանում Իրաքի Արաբական Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեսպանների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ ուսումնական ծրագրերը, և քայլեր են ձեռնարկվել ԵՊՀ-ում ուսանելու նպատակով այդ երկրներից դիմորդների՝ դեպի Հայաստան մեկնելը դյուրացնելու ուղղությամբ: Միաժա-

մանակ Իրաքում ՀՀ դեսպանի աջակցությամբ սկսվել է գործընթաց Իրաքի բարձրագույն կրթության նախարարության կողմից ԵՊՀ-ի ճանաչման ուղղությամբ: Արձանագրվել է դրական արդյունք, և այժմ աշխատանքներ են տարվում համապատասխան տեղեկատվությունը նշված նախարարության կայքում տեղադրելու ուղղությամբ:

2-րդ գործողությամբ նախատեսված է. «Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար»: Հաշվետու ժամանակահատվածում քայլեր են ձեռնարկվել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնությունն ստանալու ուղղությամբ: Միաժամանակ, ԵՊՀ-ն կնքել է երեք նոր պայմանագիր նորվեգական “Keystone Academic Solutions”, հայաստանյան «Կարեն Ղազարյան» ԱԶ և Արաբական Միացյալ Էմիրություններում գործող “Al Amal Consulations and Educational Services” կազմակերպությունների հետ՝ Մերձավոր Արևելքի երկրներում ուսանողներ հավաքագրելու նպատակով:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր»: Հրատարակվել է ԵՊՀ-ում օտար-

երկրյա ուսանողների ընդունելության և ուսումնառության պայմանների, համալսարանի, նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու-ուղեցույցը, որը համալսարանից գործուղվող աշխատակիցների, ՀՀ ԿԳՄՄՆ սփյուռքի բաժնի, ՀՀ դեսպանատների միջոցով տարածվել են օտարերկրյա պետություններում հավանական դիմորդների շրջանում: Նշված նյութերը տեղադրվել են նաև ԵՊՀ կայքում:

2018/2019 ուստարվա ընթացքում ուսումնասիրվել են ԵՊՀ ֆակուլտետների հնարավորությունները բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերը անգլերենով առկա, ինչպես նաև հեռավար (distance-learning կամ e-learning) ձևով կազմակերպելու համար: Արդյունքում ֆակուլտետների կողմից ներկայացվել են բակալավրիատի 5 և մագիստրոսական 10 մասնագիտությունների գծով անգլերենով ուսուցման կրթական ծրագրեր: Դրանց վերաբերյալ տվյալները փոխանցվել են նաև որոշ միջնորդ կազմակերպությունների՝ ուսանողների հավաքագրման նպատակով: Միաժամանակ, ՀՀ և ՉԺՀ պաշտպանության նախարարությունների առաջարկությամբ ֆակուլտետների կողմից մշակվել և ներկայացվել են 9 մասնագիտությունների գծով ռուսերենով և անգլերենով ուսուցման մեկամյա մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնց ուղղությամբ ընդունելությունը կիրականացվի 2020/2021 ուսումնական տարվանից:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու

համար»: Այս գործողության կատարման նպատակով կատարելագործվել են նախապատրաստական կրթական ծրագրերը, ներդրվել են դասընթացների կազմակերպման նոր մոդելներ, մշակվել և նորացվել են բոլոր առարկայական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով ընդունելության ընդունված չափանիշներին: Գործել է դասընթացների վարման երկփուլ տարբերակ՝ բաղկացած տարրական գիտելիքների յուրացման և հիմնական կրթական գիտելիքների մակարդակի՝ ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցման փուլերից: 2018/2019 ուսումնական տարվանից օտարերկրյա դիմորդների լեզվական գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով ավելացվել են «Հայոց լեզու» առարկային տրամադրվող դասաժամերը:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ռազմավարական 8-րդ նպատակի 8.1. *խնդրով* սահմանված է. **«Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները»:**

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով»: Բարձրագույն կրթական ծրագրերի պետական ֆինանսավորման ծավալները 2014 թ-ից մինչև 2018 թ. յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ ավելացել են՝ պայմանավորված մեկ ուսանողի համար սահմանված ուսանողական նպաստի չափի ավելացումով (2014 թ.՝ 596500 դրամ, 2015 թ.՝ 632415 դրամ, 2016 թ.՝ 648431 դրամ, 2017 թ.՝ 656640 դրամ): 2018 և 2019 թթ.-ին ֆինանսավորման ծավալները նվազել են՝ պայմանավորված երկու հանգամանքով՝

ա. նվազել է մեկ ուսանողի ուսանողական նպաստի չափը, որը կազմում է 640000 դրամ,

բ. նվազել է ավագ դպրոցի շրջանավարտների թիվը՝ կապված 12-ամյա կրթական ծրագրի ներդրման հետ:

Պետական ֆինանսավորման չափը ըստ տարիների (հազար դրամ)				
2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
1468718,0	1643508,4	1755437,0	1844202,4	1834148,5

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերի ֆինանսավորման ծավալները 2014-2017 թթ. ավելացել են: 2018 թ.-ին ֆինանսավորման ծավալը նվազել է՝ հաշվի առնելով երկու հանգամանք.

ա. բոլոր գիտական ծրագրերի պետական ֆինանսավորման չափերը նվազել են 7 տոկոսի չափով,

բ. գիտական թեմատիկ դրամաշնորհային ծրագրերը 2018 թ.-ին մեկնարկել են ոչ թե տարեսկզբից, այլ սեպտեմբերից:

2019 թ.-ին պետական ֆինանսավորման ծավալը կրկին ավելացել է, սակայն ոչ թե ծրագրերի ավելացման, այլ հարկային քաղաքականության փոփոխության հաշվին, համաձայն որի՝ դրամաշնորհային ծրագրերը չեն ազատվում ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), եթե ծրագրի իրականացման որևէ փուլում կատարվում է ծառայությունների թեկուզև անհատույց մատուցում:

Պետական ֆինանսավորման չափը ըստ տարիների (հազար դրամ)				
2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
934527,6	1013536,1	1036232,9	1060277,6	837131,7

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտու-

թյունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով»: ԵՊՀ-ում ուսման վարձերի բարձրացում վերջին անգամ կատարվել է 2016/2017 ուսումնական տարում, որից հետո վարձաչափերի փոփոխություն չի եղել: Վարձաչափերի վերանայում (բարձրացում) նախատեսվում է 2020/2021 ուսումնական տարում:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին»:* ԵՊՀ տարեկան եկամուտներում էական մաս են կազմում դրամաշնորհային ծրագրերից ստացվող ֆինանսավորումները (2015 թ.՝ 452 մլն դրամ, 2016 թ.՝ 751 մլն դրամ, 2017 թ.՝ 654 մլն դրամ, 2018 թ.՝ 421 մլն դրամ, 2019 թ. 10 ամիսների ընթացքում՝ 481 մլն դրամ): Այդ ծրագրերին մասնակցում է շուրջ 200 ԵՊՀ աշխատող:

Հաշվետու ժամանակահատվածում տեղական գիտահետազոտական դրամաշնորհային՝ թեմատիկ ծրագրերում ԵՊՀ մասնաբաժինը կազմել է մոտ 30 %, ընդ որում այդ ծրագրերի ընդհանուր ֆինանսավորումը 322.080.000 դրամ է, իսկ այդ ծրագրերում ընդգրկված մասնակիցների թիվը՝ շուրջ 380: Միջազգային դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված են եղել ԵՊՀ շուրջ 260 աշխատող, 14 սպիրանտ, 23 մագիստրանտ և բակալավրիատի 4 ուսանող: Այդ ծրագրերի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 442.477.000 դրամ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները»:* ԵՊՀ-ում իրականացված հիմնանորոգումների արդյունքում ավելացել են վճարովի

ծառայությունները, մասնավորապես՝ 2018 թվականից՝ մարզադահլիճների, հյուրերի տան, 2019 թվականից՝ ուսանողական հանրակացարանի վճարովի ծառայությունները, իսկ 2020 թվականից նախատեսվում է ավելացնել Բյուրականի ուսումնասարտադրական Բազայի վճարովի ծառայությունները: Չնայած վերոնշյալին՝ վճարովի ծառայությունների եկամուտները համալսարանի ընդհանուր եկամուտներում կազմում են շուրջ 2,5 տոկոս:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»:* ԵՊՀ-ում առանձին ստորաբաժանումների կողմից իրականացվող գիտակրթական ծրագրերին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով ԵՊՀ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվում են գործընկերային աշխատանքներ: Մասնավորապես՝

- Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կազմում «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» պահպանման, զարգացման և իրականացվող ծրագրերին աջակցություն են ցուցաբերել «Իմքս Գրուպ», «Ավանգարդ», «Գազպրոմ Արմենիա», «Տաշիր բարեգործական հիմնադրամ» ընկերությունները, ինչպես նաև այդ ֆակուլտետի առանձին շրջանավարտներ:
- Իրավագիտության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողներին, միջազգային

օլիմպիադաներին մասնակցելու նպատակով, ֆինանսական աջակցություն են ցուցաբերել «Տավիտիան» հիմնադրամը, «Զանգեզուրի ՊՄԿ», «Կարմիր խաչի միջազգային կոմիտե», «Հայկական ծրագրեր» ընկերությունները:

- Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի կողմից իրականացված «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ, VII» միջազգային գիտաժողովի կազմակերպման համար ֆինանսական աջակցություն են ցուցաբերել «Հետազոտական մաթեմատիկա» հիմնադրամը, ԵՊՀ-ն և ՀՀ գիտության կոմիտեն:
- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Գերմեն ինտեգրալ սխեմաների նախագծում» կրթական ծրագիրն իրականացվում է «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի պատվերով և ֆինանսական աջակցությամբ:
- Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի համար գույքի ձեռքբերման նպատակով աջակցել է «Արցախբանկ» ՓԲԸ-ն:
- Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման համար մշտապես աջակցում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (AGBU):

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր»*: Բիզնես ծրագրերի իրականացման արդյունքում ավելացել են ԵՊՀ վճարովի ծառայությունների գծով եկամուտները, որոնց մասին նշվել է 8.1.4. կետում (մարզա-

սրահներին, հյուրերի տանը, ուսանողական հանրակացարանին վերաբերող ծրագրեր): Նախատեսվում է իրականացնել Բյուրականի, Դիլիջանի, Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազաների կահավորումը, հիմնանորոգումը և վճարովի ծառայությունների ավելացման ծրագրերը:

Խնդիր 8.2-ով սահմանված է. «Ձարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով»: Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման, ծրագրային ապահովման նպատակով ներդրվել են.

- «Հայկական ծրագրեր, 7-րդ տարբերակ» հաշվապահական ծրագիրը,
- «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը, որը համատեղ շահագործվում է ԵՊՀ հաշվապահության և Անձնակազմի կառավարման բաժնի կողմից:
- Ուսանողների անալիտիկ (մանրամասնեցված) հաշվառման ծրագիրը, որն այժմ շահագործվում է միայն հաշվապահության կողմից,

Ներդրվել է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Mulberry» համակարգը:

Խնդիր 8.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը»*: Համալսարանի ֆինանսական գործառույթներ իրականացնող Հաշվապահության, Անձնակազմի կառավարման բաժնի և Գնումների պլանավորման և պահեստավորման վարչության աշխատողները մասնակցել են վերապատրաստման դասընթացներին և ստացել վկայականներ:

Սահմանվել են հաշվապահական ծառայության գործառույթների իրականացման ընթացակարգերը:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրերը»*: Ռեսուրսախնայողության համար իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Մասնաշենքերում լուսատուները փոխարինվել են «LED» լուսատուներով,
- Մարզահամալիրի տանիքում տեղադրվել է «Արևային ՖՎ» համակարգը,
- Գործում է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Mulberry» համակարգը,
- Կրճատվել են ծառայողական նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների թվաքանակը և համապատասխան հաստիքները:

Խնդիր 8.3-ով նախատեսված է. «Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:* Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են համալսարանի կառուցվածքի օպտիմալացման, ստորաբաժանումների արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված սկզբունքների, իրականացման մեխանիզմների և գործողությունների համալիր ծրագրի մշակման աշխատանքները:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ»:* Շարունակվել են ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը չափող ցուցանիշների և աուդիտի իրականացման ընթացակարգերի մշակմանն ուղղությամբ գործընթացները: Մասնավորապես՝ որոշակի աշխատանքներ են իրականացվել ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետների, ամբիոնների) ներքին աուդիտը փոխարինելու նրանց իրականացրած հիմնական գործունեության (կրթական ծրագրերի մատուցման) որակի պարբերական մշտադիտարկմամբ և վերանայմամբ: Համապատասխան գործընթացները մեկնարկել են ընթացիկ ուսումնական տարում:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգ) համակարգ»:* Չնայած այն հանգաման-

քին, որ ԵՊՀ-ն իր գործունեության բոլոր հիմնական ոլորտներում հավաքագրում, մշակում, վերլուծում և հրապարակում է գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշները, այնուամենայնիվ, համանման ցուցանիշների համեմատումը տեղական և արտասահմանյան բուհերի հետ դեռևս մնում է խնդրահարույց՝ համադրելի բուհերի բացակայության պատճառով:

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը»*: ԵՊՀ-ում տեղեկատվական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ ունի: Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում ներդրվել է փաստաթղթաշրջանառության “Mulberry” էլեկտրոնային համակարգը, որի արդյունքում բարձրացել է աշխատանքի արդյունավետությունը, տնտեսվել են մի շարք միջոցներ: Զուգահեռաբար կատարելագործվել են ԵՊՀ ներքին աշխատանքային մյուս համակարգերը:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում»*: Այս խնդրի ուղղությամբ Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերը («Ուսանողական ինքնակառավարման», «Զարգացում» սեմինար-դասընթացներ, «Ուսանողական ռեկտորատ», «ՈԻԽ զարգացում» դպրոց և այլն) միտված են բուհի գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ներհամալսարանական կյանքին ուսանողների մասնակցության խթանմանը: Համալսարանի կառավարման

գործընթացներում սովորողների մասնակցությունն ապահովվել է գործող կարգի (ՀՀ օրենսդրություն, ԵՊՀ կանոնադրություն, ներքին իրավական ակտեր) համաձայն՝ տարբեր մակարդակի կառավարման մարմիններում սովորողների ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ:

Խնդիր 8.4-ով սահմանված է. «Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Մշակել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր»: 2018 թ. ավարտվել է ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը, և ներկայացվել է համապատասխան կատարողականը:

Խնդրի իրագործմանն ուղղված 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը»: Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը բարձրացնելու նպատակով մշակվել են բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները, որոնք գետեղված են կայքում և հասանելի են բոլոր ուսանողներին:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում»*: Այս ուղղությամբ իրականացվել է շարունակական աշխատանք: ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը համապատասխան արհբյուրոնների միջոցով աշխատողներին տեղեկացրել է նրանց հուզող խնդիրների մասին, ԵՊՀ արհեստակցական կազմակերպության որոշումները, հաշվետվություններն ու արձանագրությունները և այլ փաստաթղթեր տեղադրված են ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կայքում (տե՛ս նաև 3.1.7 կետում):

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Քննարկել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում»*: Այս գործողությունն իրականացվել է ամբողջությամբ: ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը մանրամասն քննարկվել է ԵՊՀ գիտական և հոգաբարձուների խորհուրդներում ու ստացել բավարար գնահատական: Միաժամանակ, խորհուրդների անդամների կողմից արվել են առաջարկներ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Խնդիր 8.4-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ»*: Այս ուղղությամբ շարունակվել են նախորդ տարիներին սկսված և իրականացվող գործընթացները:

IX. ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

«Միջազգայնացում և գործակցություն» ռազմավարական նպատակի 9.1. խնդրով սահմանված է. **«Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը»:**

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, դրանց հիման վրա երկամյա պարբերականությամբ իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)»: Այս գործողությանը համապատասխան՝ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է ներքին բենչմարքինգ՝ շարժունությունը գնահատելու համար: Էականորեն աճել է փոխանակման ծրագրերի շրջանակում արտերկիր մեկնող սովորողների թիվը (2017/2018 ուստարում արտերկիր է մեկնել ԵՊՀ մոտ 200 ուսանող և ասպիրանտ, 2018/2019 ուստարում՝ 300-ը): Մշակվել են արտաքին բենչմարքինգի չափանիշները (միջազգայնացման ռազմավարության, միջազգային գործունեության, ուսանողների, աշխատողների շարժունության, միջազգայնացման գործիքակազմերի հիման վրա), որոնց համապատասխան իրականացվում է միջազգայնացման գործընթացների որակի գնահատումը:

3-րդ գործողությամբ նախատեսված է. «Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տար-

բեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները»: Այս գործողությամբ նախատեսված՝ միջազգայնացման գործընթացների պատասխանատուների ինստիտուտ է գործում բոլոր ֆակուլտետներում: Հաշվետու ուսումնական տարվա ավարտին պատասխանատուները խրախուսվել են՝ վարձատրվելով ժամավճարային հիմունքներով:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մտեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ»:* Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ կայքում միջազգայնացմանն առնչվող բաժինն ավելի տեսանելի է դարձել: Պարբերաբար թարմացվել է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, հետազոտության, միջազգային փոխանակումների, այդ թվում՝ Էրազմուս+ ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»:* Հաշվետու ուստարում ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության 4 աշխատակից մասնակցել է Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի գործընկեր համալսարաններում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Միաժամանակ, միջազգայնացման ռազմավարությանը նպաստող գործընթացներին մասնակցելու նպատակով ԵՊՀ վարչակազմից 224 անձ գործուղվել է տարբեր երկրներ:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ»: 2018/2019 ուստարում ԵՊՀ է այցելել և դասախոսություններով հանդես եկել 95 պրոֆեսոր՝ արտասահմանյան տարբեր բուհերից:

Խնդիր 9.2-ով սահմանված է. «Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել թիրախային օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ»: Այս գործողությամբ նախատեսված միջոցառումների համար ԵՊՀ կայքում հասանելի է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ում սովորող օտարերկրյա քաղաքացիների համար կազմակերպվել են դասընթացներ՝ ռուսերենով և անգլերենով: Մշակվել է օտարալեզու 38 դասընթացների ծրագիր, որոնցից 31-ը՝ մագիստրատուրայի, 7-ը՝ բակալավրիատի սովորողների համար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը»: Հաշվետու ուստարում կազմակերպվել է 2 ամառային դպրոց՝ նախատեսված ԱՄՆ-ից ժամանած ուսանողների համար:

Նշված խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը»: ԵՊՀ կայքում պարբերաբար տեղեկա-

տվությունն է տեղադրվում փոխանակման ծրագրերի վերաբերյալ, ինչը 2018/2019 ուստարում նպաստել է ԵՊՀ աշխատողների և սովորողների շարժունության ակնհայտ աճին: Փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ԵՊՀ ուսանողներն ու աշխատողները պարբերաբար ստացել են նաև իրենց էլեկտրոնային փոստի միջոցով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ»*: Հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակում (շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում): 2018/2019 ուստարում ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետից Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարան (ԱԲՌՀ) է մեկնել մեկ ուսանող՝ «տուրիզմ» մասնագիտությամբ ուսանելու:

Կրկնակի դիպլոմով ծրագրեր են իրականացվել Բելգորոդի (ՌԴ) համալսարանի հետ՝ կենսաբանության, Լե Մանի (Ֆրանսիա) համալսարանի հետ՝ մաթեմատիկայի բնագավառներում: Հաշվետու ուստարում ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետից Լե Մանի համալսարան է մեկնել երկու ուսանող: